

Հաստատված է «Ակտինա Կապիտալ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության
Արտահերթ Ընդհանուր Ժողովի Նիստի
Թիվ 2026/03/23-1 Արձանագրությամբ
Տնօրենի ժ/պ՝ Սերգեյ Գալոյան



«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ

**ՓԼ/ԱՖ/ԶՈՁ ՏՖ ռիսկի հանդուրժողականության մակարդակի (ռիսկ
ախորժակի) որակական և քանակական չափանիշների**

ԿԱՐԳ

Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
1	23.03.2026	23.03.2026

2026թ. ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԳԼՈՒԽ 2. ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	3
ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	4
Աղյուսակ 1	5
Աղյուսակ 2	19

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ակտիվա Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «**Ընկերություն**») փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման (այսուհետ՝ «**ՓԼ/ԱՖ/ԶՈՁ ՏՖ**») ռիսկերի զսպման արդյունավետ կառուցակարգերի ապահովման նպատակով սահմանվել է Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՁ ՏՖ ռիսկի ախորժակը՝ կիրառելով որակական և քանակական չափանիշներ: Ռիսկի ախորժակը սահմանվել է ռիսկերի բացառման (de-risking) և/կամ ռիսկերի սահմանափակման մոտեցման կիրառմամբ՝ միաժամանակ ապահովելով Ընկերության ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը:

2. Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել Ընկերության ՓԼ/ԱՖ և ԶՈՁ ՏՖ ռիսկի ախորժակի ձևավորման մոտեցումները, սկզբունքները, սահմանված ցուցանիշներից շեղումների ընթացակարգերը՝ ապահովելով ներպետական և միջազգային պահանջների, ինչպես նաև ֆինանսական կայունության և համբավի պահպանման նկատմամբ հավատարիմ քաղաքականություն:

3. Սույն փաստաթղթի հիմքում դրված է այն մոտեցումը, որ Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՁ ՏՖ ռիսկի ախորժակը պետք է համարժեք արձագանքի այն միջավայրային գործոններին, որոնցում գործում է Ընկերությունը: Այդ գործոնները ներառում են աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումները, մակրոտնտեսական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները, իրավական և կարգավորող միջավայրի խստացվող պահանջները, ինչպես նաև տեխնոլոգիական և թվային զարգացումները, որոնք էականորեն ազդում են ֆինանսական հոսքերի կառուցվածքի, հաճախորդների վարքագծի և ռիսկերի զսպման մեխանիզմների վրա: Միաժամանակ, ռիսկի ախորժակը ներառում է նաև միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովմանն ուղղված չափանիշներ՝ սահմանելով միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա որոշ պետությունների՝ արտատարածքային ազդեցություն ունեցող պատժամիջոցների ծրագրերի նկատմամբ Ընկերության մոտեցումները:

4. Ռիսկ ախորժակի սահմանման՝ որակական և քանակական չափանիշների մշակման շրջանակներում Ընկերության համար հիմք են հանդիսացել կամ առնվազն հաշվի են առնվել.

- 4.1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության¹՝ այդ թվում Լիազոր մարմնի² իրավական ակտերի պահանջները,
- 4.2. «2021-2023թթ. Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման հաշվետվության արդյունքները,
- 4.3. Ընկերության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ռազմավարական վերլուծության վերջին հաշվետու ժամանակահատվածի արդյունքները,
- 4.4. Միջազգային լավագույն փորձը՝ ելնելով միջազգային կազմակերպությունների³ կողմից սահմանված պահանջներից և սպասումներից:
- 4.5. Միջազգային կառույցների և արտասահմանյան երկրների կողմից կիրառվող պատժամիջոցների ծրագրերը:

¹ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ Օրենք, Փողերի լվացման եվ ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի եվ կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց և այլն:

² ՀՀ կենտրոնական բանկ:

³ FATF, Transparency International, Wolfsberg Group:

5. Ռիսկի ախորժակը կիրառելի է Ընկերության բոլոր գործարար հարաբերությունների, ծառայությունների, գործառնությունների, ֆինանսական և ոչ ֆինանսական միջնորդների ու կոնտրագենտների հետ հարաբերությունների հաստատման, ինչպես նաև նոր պրոդուկտների և ծառայությունների ներդրման գործընթացում՝ անկախ հաճախորդի իրավական կարգավիճակից, բնակության վայրից կամ գործունեության ոլորտից:

6. Ստորև ներկայացվում են Ընկերության ռիսկի ախորժակի որակական և քանակական չափանիշները, որոնք ամփոփված են համապատասխանաբար Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում

ԳԼՈՒԽ 2. ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7. Ընկերության ներքին դիտարկումների մարմինը (կամ ՆԴՄ պատասխանատու աշխատակիցը) մշակում է ռիսկի հանդուրժողականության մակարդակի նախագիծ, սահմանելով հստակ քանակական և որակական չափանիշներ: Ռիսկի հանդուրժողականության մակարդակի մշակման համար հիմք են ընդունվում այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Ընկերության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ռազմավարական վերլուծություն արդյունքները, Ընկերության գործարար ծրագրերը և այլ գործոններ:

8. Շահագրգիռ բոլոր ստորաբաժանումների՝ ներքին հսկողության օղակների և գործադիր մարմնի հետ նախագծի շուրջ իրականացվում են քննարկումներ՝ առաջարկվող սահմանների իրատեսականությունը, գործնական կիրառելիությունը և բիզնեսի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով:

9. Ռիսկի ախորժակի վերջնական տարբերակը ներկայացվում է Ընկերության մասնակիցների ընհանուր ժողովին (կամ միակ մասնակցին), որը հաստատում է ՓԼ/ԱՖ/ՁՈՁ ՏՖ և միջազգային պատժամիջոցների ոլորտում ռիսկի ախորժակի փաստաթուղթը՝ ներառյալ ռիսկի հանդուրժողականության քանակական և որակական սահմանները:

10. Ռիսկի ախորժակը ենթակա է պարբերական վերանայման կամ առնվազն դրա փոփոխության նպատակահարմարության քննարկման՝ առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ՝ ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտություն են համարվում, սակայն չեն սահմանափակվում, Ռիսկերի ազգային գնահատման հերթական հաշվետվությամբ վերհանված եզրահանգումների առկայություն, Օրենսդրական կամ կարգավորող դաշտի էական փոփոխություն, Լիազոր մարմնի վերահսկողական սպասումներ, ներքին կամ արտաքին աուդիտից, ինչպես նաև միջազգային գործընկերներից (ներառյալ թղթակցային բանկերից) ստացված ազդականեր, դիտարկումներ և/կամ նոր պահանջներ և այլն:

11. Վերանայման արդյունքում կարող են փոփոխվել ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշները: Համապատասխան փոփոխությունները պետք է իրականացվեն ռիսկ ախորժակի հաստատման նույն ընթացակարգին համապատասխան:

12. Ռիսկի ախորժակի հանդուրժողականության ցուցանիշները ենթակա են հսկման, որոնց նկատմամբ հսկողություն իրականացնելու համար պատասխանատու է Ներքին ֆինանսական դիտարկումների վարչությունը:

13. Ռիսկ ախորժակի նկատմամբ իրականացված հսկողության և դիտանցման արդյունքները ամփոփ հաշվետվությունների ձևաչափով ներկայացվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) կիսամյակային պարբերականությամբ՝ ՆԴՄ կիսամյակային հաշվետվության շրջանակներում: Հաշվետվությունները առնվազն պետք է առնվազն ներառեն ռիսկ ախորժակի չափանիշների հաշվետու պահին առկա ցուցանիշները՝ ռիսկի ախորժակի սահմանաչափերի/շեմերի

համատեքստում (համեմատական վերլուծությամբ), ինչպես նաև սահմանաչափերին/շեմերին մոտենալու, ինչպես նաև դրանք գերազանցելու դեպքերը:

ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

14. Ռիսկի ախորժակի շեղում է համարվում այն իրավիճակը, երբ ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկի որևէ քանակական կամ որակական ցուցանիշ շեղվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կողմից հաստատված նպատակային մակարդակից և գերազանցում է սահմանված ընդունելի սահմանաչափերը: Շեղումը համարվում է արձանագրված՝ անկախ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից, և ենթակա է անհապաղ վերլուծության և կառավարման:

15. Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկի ախորժակի շրջանակում սահմանվում է շեղումների կառավարման երկաստիճան համակարգ, որի նպատակն է ապահովել շեղումների համաչափ, փուլային և վերահսկելի կառավարում:

ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկի ախորժակի ցուցանիշների համար սահմանվում են հետևյալ շեմերը.

ա) Նպատակային (թիրախային) ցուցանիշ – ռիսկի այն մակարդակը, որը Ընկերությունը ձգտում է պահպանել իր բիզնես գործունեության ընթացքում:

բ) Առավելագույն հանդուրժողականության շեմ (Ընդհանուր ժողովի շեմ) – ռիսկի այն մակարդակը, որի գերազանցումը համարվում է էական շեղում և պահանջում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) պարտադիր տեղեկացում և որոշումների ընդունում:

16. Այն դեպքում, երբ ռիսկի ցուցանիշը գերազանցում է նպատակային մակարդակը, սակայն գտնվում է առավելագույն հանդուրժողականության շեմի շրջանակում, ՆԴՄ-ն պարտավոր է իրականացնել շեղման հնարավոր ազդեցության և ռիսկի զարգացման դինամիկայի վերլուծություն, ապահովել զսպիչ միջոցառումների առաջարկություններ, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին արտահերթ տեղեկացնել շեղումը և առաջարկել անհրաժեշտ միջոցառումները՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) հաստատման համար:

17. Առավելագույն հանդուրժողականության շեմի խախտման դեպքում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) որոշում է ռիսկի ախորժակի կամ հանդուրժողականության ցուցանիշների վերանայման նպատակահարմարությունը և առաջնորդվում է ռիսկը բացառելու կամ ընդունելու մոտեցմամբ: Ռիսկը ընդունելու դեպքում այն ուղեկցվում է ՆԴՄ լրացուցիչ ռեսուրսներ ներգրավմամբ, լրացուցիչ սահմանափակումների կիրառմամբ կամ նոր ստանձնող ռիսկերի կառավարման մեխանիզմների սահմանմամբ:

Աղյուսակ 1

Գործարար հարաբերությունների մերժման դեպքերը, բարձր ռիսկային չափանիշներով բնութագրվող կամ սպասարկման հափուկ սահմանափակումներով բնութագրվող որակական չափանիշներ

«Արգելված» մակարդակին դասվող հաճախորդների, գործարքների կամ հարաբերությունների դեպքում Ընկերությունը չի ընդունում և չի շարունակում գործարար հարաբերություններ՝ անկախ հավելյալ հսկողության կիրառման հնարավորությունից: Այս մակարդակը կիրառվում է այն դեպքերի պարագայում, որոնք իրենց բնույթով հակասում են ՀՀ օրենսդրությանը, միջազգային պատժամիջոցների ծրագրերին, ՖԱԹՖ-ի հիմնական պահանջներին և/կամ հանգեցնում են անընդունելի ռիսկի:

«Սահմանափակ» մակարդակին դասվող ռիսկի դեպքում Ընկերությունը կարող է ընդունել այդ ռիսկը, որոշ խիստ սահմանափակումների և/կամ պայմանների առկայության կամ բացակայության դեպքում: Այդ գործարար հարաբերությունները թույլատրելի են բացառիկ կամ սահմանափակ ծավալներով՝ ուժեղացված, խորքային և առավել հաճախակի հսկողական համակարգերի կիրառման, որոշակի շեմերի և կոնկրետ իրավիճակից բխող այլ վերապահումների պարագայում՝ նախնական հաստատման պայմանով:

«Բարձր ռիսկ» մակարդակում ներառված հաճախորդների պարագայում, անկախ դրանց՝ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված լինելու հանգամանքից (օրինակ՝ Փողերի լվացման եվ ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույց և այլն) գործում են բարձր ռիսկային հաճախորդների սպասարկմանը, հավելյալ պատշաճ ուսումնասիրություններին և հարակից այլ պարտականություններ նախատեսող՝ ներքին իրավական ակտերով և ներքին հսկողական համակարգերով նախատեսված միջոցառումները:

	Նկարագրություն	Ռիսկ ակտորժակ	Մեկնաբանություն
	Հաճախորդի ռիսկ		
1.	Անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ կամ միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ:	Արգելված	-
2.	Որևէ տեսակի գործարար հարաբերություն կեղծ բանկերի կամ այն ֆինանսական հաստատությունների հետ, որոնք սպասարկում են կեղծ բանկերի:	Արգելված	-
3.	Ըստ ներկայացնողի արժեթղթերով գործարքներ:	Արգելված	-
4.	Անձինք, որոնք գրանցված են կամ գործունեություն են ծավալում ՖԱԹՖ-ի կողմից հրապարակվող «սև ցուցակում» ներառված երկրներում ⁴ :	Արգելված	-

⁴ Հղում՝ <https://www.fatf-gafi.org/en/countries/black-and-grey-lists.html>:

5.	Անձինք, որոնք ներառված են ՄԱԿ-ի, ԱՄՆ ԱԱՎԳ ⁵ -ի և ԱԱԲ-ի ⁶ , ԵՄ-ի և ՄԹ-ի պատժամիջոցների ցանկերում: Ինչպես նաև անձինք, որոնք ներառված են Սև ցանկերում:	Արգելված	-
6.	Իրավաբանական անձինք, որոնց 50% և ավել բաժնեմասին տիրապետող բաժնետերերը գտնվում են ԱՄՆ ԱԱՎԳ-ի և ԱԱԲ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում:	Արգելված	-
7.	Հանրամատչելի հավաստի աղբյուրներում և լայնորեն կիրառվող տեղեկատվական շտեմարաններում (Worldcheck, Accuity և այլն) որպես «պատժամիջոցների հետ ասոցացվող անձ» բնութագրվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ անձինք, ովքեր ունեն ուղղակի կապ պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց և կազմակերպությունների հետ, օրինակ՝ ցանկերում ներառված անձանց ընտանիքի անդամներ, այդ թվում՝ կին, ամուսին, երեխաներ, ծնողներ, իրավաբանական անձանց դեպքում՝ սեփականատերեր, իրական շահառու, իրավաբանական անձի կառուցվածքում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձինք⁷, ինչպես նաև փաստացի կառավարում իրականացնող անձինք:	Արգելված/Սահմանափակ/Բարձր ռիսկ	Արգելված՝ որպես արգելված են դիտարկվում այն դեպքերը, երբ - Հաճախորդը հանդիսանում է պատժամիջոցների ենթարկված ֆիզիկական անձի ընտանիքի (առաջին (ամուսին, զավակ, ծնող) և երկրորդ կարգի (համամայր/համահայր քույր/եղբայր, վերջիններիս ամուսինները և զավակները և տատ/պապ, զավակների ամուսինները և զավակները)) անդամ և հնարավոր չէ հանգել հիմնավոր ենթադրության, որ հաճախորդի գույքը առանձնացված է պատժամիջոցների ենթարկված անձի գույքից, կամ առկա է ողջամիտ կասկած միջազգային պատժամիջոցների ներքո գտնվող անձանց պատկանող գույքի փաստացի շրջանառման ռիսկի վերաբերյալ: - Հաճախորդը հանդիսանում է պատժամիջոցների ենթարկված իրավաբանական անձի գործադիր ղեկավարումն իրականացնող մարմնի անդամ, որը իրավասու է իրավաբանական անձի անունից որոշումներ իրականացնել, ներառյալ՝

⁵ ԱՄՆ գանձապետարանի արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակ (OFAC)

⁶ ԱՄՆ արդյունաբերության և անվտանգության բյուրո (BIS)

⁷ Խորհրդի/վարչության/գործադիր մարմնի անդամներ:

			փաստացի կառավարումն իրականացնող անձ և առկա է ողջամիտ կասկած միջազգային պատժամիջոցների ներքո գտնվող անձանց պատկանող գույքի փաստացի շրջանառման ռիսկի վերաբերյալ, կամ նշված անձը հանդիսանում է միջազգային պատժամիջոցների ենթարկված իրավաբանական անձի փաստացի ղեկավարում իրականացնող անձը: Սահմանափակ՝ որպես սահմանափակ են դիտարկվում այն դեպքերը, երբ • Հաճախորդը նախկինում հանդիսացել է, սակայն ներկայումս չի հանդիսանում պատժամիջոցների ենթարկված իրավաբանական անձի գործադիր ղեկավարումն իրականացնող մարմնի անդամ, որը իրավասու է իրավաբանական անձի անունից որոշումներ իրականացնել: • Հաճախորդը հանդիսանում է պատժամիջոցների ենթարկված ֆիզիկական անձի հետ ուղղակի փոխկապված անձ, որը ներառված չէ ընտանիքի անդամի կազմում, և հնարավոր է հանգել հիմնավոր ենթադրության, որ հաճախորդի գույքը առանձնացված է պատժամիջոցների ենթարկված անձի գույքից: Բարձր ռիսկ՝ որպես բարձր են դիտարկվում այն դեպքերը, երբ • Հաճախորդը հանդիսանում է միջազգային պատժամիջոցների ենթարկված իրավաբանական անձի աշխատակից, որի զբաղեցրած պաշտոնը սակայն չի ենթադրում իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավասություն/ հնարավորություն: • Հաճախորդը հանդիսանում է միջազգային պատժամիջոցների ենթարկված ֆիզիկական անձի հետ փոխկապված անձ, սակայն
--	--	--	--

			ողջամտորեն հնարավոր է պնդել, որ վերջինիս գույքը առանձնացված է միջազգային պատժամիջոցների ենթադրված անձի գույքից:
8.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ներգրավված են եղել ՓԼ/ԱՖ և ՂՈՁ ՏՖ հանցագործություններում (որոնք դատապարտվել են դիտավորյալ կամ կոպիտ անզգուշությամբ կատարված ՓԼ/ԱՖ և ՂՈՁ ՏՖ հանցագործության մեջ, ներառյալ՝ երբ ներգրավված է որպես հանցակից): Սույն չափանիշը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ նշված անձինք ներգրավված են քերական վարույթում որպես մեղադրյալ:	Արգելված	-
9.	Թրասթեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք, որոնք գրանցված են կամ ռեգիդենտ են կամ գործունեություն են ծավալում թափանցիկության և տեղեկատվության փոխանակման անարդյունավետ ռեժիմներ ունեցող երկրներում ⁸ :	Արգելված	-
10.	Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչներ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական բացեր ունեցող երկրներից ⁹ , կամ այն երկրներից, որոնց ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի գնահատման հաշվետվությամբ	Արգելված	-

⁸ Որպես տեղեկատվության փոխանակման և թափանցիկության անարդյունավետ ռեժիմ ունեցող երկրներ կարող են դիտարկել ՖԱԹՖ և ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային կառույցների գնահատումներով «Անմիջական արդյունք 2 (Միջազգային համագործակցություն)» և «Անմիջական արդյունք 5 (Իրավաբանական անձինք և կազմավորումներ)» միաժամանակ որպես արդյունավետության «Ցածր» մակարդակ ունեցող գնահատված երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող իրավաբանական կազմավորումներին, այդ թվում թրասթերին: Համապատասխան երկրների ցանկը ներկայացված է 2025 թվականի մարտի դրությամբ: (<https://www.fatf-gafi.org/en/publications/Mutualevaluations/Assessment-ratings.html>):

⁹ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ռազմավարական բացեր ունեցող երկրների ցանկը սահմանվում և պարբերաբար վերանայվում է ՖԱԹՖ-ի կողմից: Համապատասխան երկրների ցանկը ներկայացված է 2025 թ-ի մարտի դրությամբ: (<https://www.fatf-gafi.org/en/publications/High-risk-and-other-monitored-jurisdictions/increased-monitoring-february-2025.html>): Բուլղարիա, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Խորվաթիա, Հաիթի, Զամբիա, Քենիա, Մալի, Մոզամբիկ, Նամիբիա, Նիգերիա, Ֆիլիպիններ, Սենեգալ, Հարավային Աֆրիկա, Հարավային Սուդան, Սիրիա, Տանզանիա, Թուրքիա, Վիետնամ, Եմեն

	համապատասխան ոլորտի վերահսկողությունը բացակայում է կամ ունի "Ցածր" արդյունավետություն ¹⁰ :		
11.	Առանց լիցենզիայի գործունեություն ծավալող կազմակերպություններ, եթե գործունեության վայրի երկրի օրենսդրությամբ համապատասխան ոլորտը ենթակա է լիցենզավորման:	Արգելված	-
12.	Զենքի առուվաճառքով զբաղվող կազմակերպություններ:	Արգելված	Բացառությամբ ՀՀ Պաշտպանության նախարարության
13.	Հաճախորդներ, որոնք զբաղվում են երկակի նշանակության, ինչպես նաև միջավայրի վրա վտանգավոր ազդեցություն ունեցող ապրանքների արտադրությամբ և վաճառքով:	Արգելված	-
14.	Հաճախորդներ, որոնք զբաղվում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների արտադրությամբ և վաճառքով:	Արգելված	-
15.	Մասնագիտացված միջնորդների, հավատարմագրային կազմակերպությունների և ֆիդուցիար հաշիվների հետ, երբ իրական շահառուն նույնականացված չէ և/կամ հնարավոր չէ իրականացնել հավելյալ պատշաճ ուսումնասիրություն,	Արգելված	
16.	Հաճախորդներ, որոնք ուղղորդվում են երրորդ անձանց կողմից:	Արգելված	
17.	Արժեթղթեր, որոնց էմիտենտ իրավաբանական անձը ներառված է ԱՄՆ, ԵՄ կամ ՄԹ պատժամիջոցների ցանկերում:	Արգելված/Սահմանափակ	Բացառություն են կազում այն էմիտենտ կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերը, որոնք ցուցակված են ոչ արգելող ցանկերում (օրինակ՝ OFAC-ի SSI, FSE, NS=PLC, CAPTA-List, NS-MBS list, NS-CMIC List), կամ որոնց հետ հարաբերությունները կարգավորվում են պատժամիջոցներ հրապարակող

¹⁰ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի գնահատման արդյունավետության հաշվետվությամբ ՖԱԹՖ 24-րդ հանձնարարականին ոչ համապատասխան երկրներն են՝ Ալժիր, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Անգոլա, Բենին, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Զադ, Հասարակածային Գվինեա, Էսվատինի, Գաբոն, Հաիթի, Հոնդուրաս, Լաոս, Մոզամբիկ, Մյանմա, Պալաու, Պանամա, Շրի Լանկա, Սուրինամ, Ուգանդա, Վենեսուելա, Զիմբաբվե:

			մարմնի կողմից հաստատված հատուկ ակտով՝ դիրեկտիվայով, ընդհանուր թույլտվությամբ կամ կարգավմամբ՝ դրանցով արգելված գործողությունների համապատասխանության ապահովման նախապայմանով:
18.	Արժեթղթեր, որոնք ցուցակված են ԱՄՆ, ԵՄ կամ ՄԹ պատժամիջոցների ցանկերում ցուցակված դեպոզիտարիաներում/բորսաներում:	Արգելված/Սահմանափակ	Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սանկցիոն դեպոզիտարիայում տեղաբաշխված արժեթղթերը գործարար հարաբերությունների հաստատման պահին այլևս չեն գտնվում սանկցիոն դեպոզիտարիայի/բորսայի պահառության ներքո: Բացառություն են նաև 10-րդ կետով նախատեսված դեպքերը՝ ըստ առկայության և կիրառելիության:
19.	ԱՖ և ՋՈՁ ՏՖ տեսանկյունից ռիսկային երկրներում գրանցված, ռեզիդենտ կամ գործունեություն ծավալող ֆիզիկական, իրավաբանական անձինք, այդ թվում ոչ առևտրային կազմակերպություններ ¹¹ :	Արգելված/Սահմանափակ	Գործարար հարաբերություններ կարող են հաստատվել տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ լինելու պարագայում, օրինակ՝ պայմանավորված որոշ երկրներում հայ համայնքի առկայության հանգամանքով և այլն:
20.	Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք և ընտանիքի անդամները կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներից ¹² :	Արգելված/ Սահմանափակ	Արգելված՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք և ընտանիքի անդամները, որոնք գրանցված են և/կամ գործունեություն են ծավալում ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրում, որը «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ակտուալ վերջին հաշվետվությամբ համապատասխան սանդղակով գնահատվել է 30-ից ցածր: Սահմանափակ՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ակտուալ վերջին հաշվետվությամբ համապատասխան սանդղակով գնահատվել են 20 և ցածր գնահատված ԱՊՀ

¹¹ Երկրների ցանկը սահմանվում է հիմք ընդունելով 2021-2023թթ. ՀՀ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման շրջանակներում լիազոր մարմնի կողմից առանձնացված երկրները՝ մասնավորապես, այն երկրները, որոնք գտնվում են պատերազմական իրավիճակում, հայտնի են որպես ահաբեկչական խմբերի ակտիվ գործունեության վայր (Աֆղանստան, Հորդանան Լիբանան, Թուրքիա, Իրաք, Պակիստան, Սիրիա, Լիբիա, Եմեն, Բանգլադեշ): Միաժամանակ, նշված ցանկը սպառիչ չէ և որպես բարձր ռիսկային կարող են դիտարկվել նաև այլ երկրներ կամ տարածքներ՝ ելնելով դիտարկման պահին տիրող աշխարհաքաղաքական զարգացումներից և այլ հանգամանքներից:

¹² Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

			և ԵԱՏՄ անդամ երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված անձինք և ընտանիքի անդամները: Սույն դեպքում, ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ (հավելյալ ՀՊՈԻ) համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հստակ հիմնավորվում է եկամտի աղբյուրը, անձի եկամուտները համադրելի են ունեցվածքի և նախատեսվող գործարքների ծավալի հետ, իսկ հանրամատչելի աղբյուրներում և մասնավոր տեղեկատվական շտեմարաններում բացակայում է բացասական բնույթի որևէ տեղեկություն, ինչպես տվյալ անձի այնպես էլ վերջինիս հետ փոխկապակցված անձանց և ընտանիքի անդամների վերաբերյալ, ինչպես նաև առկա են ողջամիտ հիմքեր ՀՀ ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական և այլ իրավաչափ շարժառիթների վերաբերյալ:
21.	Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրներում գրանցված, այդ երկրների ռեզիդենտ և կոռուպցիոն ռիսկերով բնութագրվող ոլորտներում (կառուցապատման, դեղագործական, հանքարդյունաբերություն և այլ ոլորտներ) գործունեություն ծավալող անձինք ¹³ :	Սահմանափակ/ բարձր ռիսկ	Գործարար հարաբերություն կարող է հաստատվել այն դեպքում, եթե ի լրումն օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով ՀՊՈԻ միջոցառումների (անհրաժեշտության դեպքում հավելյալ ՀՊՈԻ-ի) համար պահանջվող տեղեկությունների ամբողջական ձեռքբերման, հաշիվ բացող ընկերությունը ունի և կիրառում է անրաժեշտ ընթացակարգեր և բնութագրվում է որպես հեղինակավոր կազմակերպություն, ինչպես նաև առկա են ողջամիտ հիմքեր ՀՀ ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական և այլ իրավաչափ շարժառիթների վերաբերյալ:
22.	ՔԱՌԻԱ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված անձ:	Բարձր ռիսկ	

¹³ Կոռուպցիոն բարձր ռիսկերով բնութագրվող երկրների ցանկը սահմանվել է հիմք ընդունելով «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2025» հաշվետվությունը: Որպես բարձր ռիսկային դիտարկվել են համապատասխան սանդղակով 20-ից ցածր գնահատված երկրները:

23.	Դեպքանատներ, հյուպատոսություններ և համանման ներկայացուցչություններ:	Բարձր ռիսկ	
24.	Ոչ առևտրային կազմակերպություններ, բացառությամբ ԱՖ տեսանկյունից ռիսկային երկրների հետ կապ ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների:	Բարձր ռիսկ	
25.	Թանկարժեք քարերի և մետաղների արդյունահանում և մշակում իրականացնող ընկերություններ (ծեռնարկություններ):	Բարձր ռիսկ	
26.	Արվեստի գործերի առևտուր իրականացնող ընկերություններ (ծեռնարկություններ):	Բարձր ռիսկ	
27.	Կանխիկի լայնածավալ կիրառությամբ բնութագրվող կազմակերպություններ (այդ թվում՝ ռեստորաններ, մանրածախ խանութներ, խմիչքի խանութներ, ծխախոտի մատակարարներ, գիշերային ակումբ և այլն), որոնք չեն գտնվում (և/կամ գրանցված չեն) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարական բացեր ունեցող երկրներում ¹⁴ :	Բարձր ռիսկ	
28.	Մեծ կարողություն ունեցող անձինք:	Բարձր ռիսկ	Մեծ կարողություն ունեցող անձ է համարվում այն ֆիզիկական անձը, որը բավարարվում է ստորև նշված չափանիշներից թեկուզև մեկին. ա/Հաճախորդը մեկ տարվա ընթացքում համալրել է իր հաշիվը առնվազն 1,000,000 ԱՄՆ դոլարով (կամ համարժեք այլ արժույթով)՝ ներառյալ բանկային փոխանցումներ, ավանդներ կամ արժեթղթերի մուտքագրումներ: Ընդ որում նշված չափանիշը ի հայտ է գալիս հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց 1 տարի հետո՝ տարեկան թարմացման ժամանակ: բ/Հաճախորդը մեկանգամյա գործարքով համալրել է իր հաշիվը առնվազն 1,000,000 ԱՄՆ դոլարով (կամ համարժեք այլ արժույթով), կամ կատարել է նույնարժեք արժեթղթերի փոխանցում:

¹⁴ Տե՛ս ծանոթագրություն թիվ 12-րդը:

			գ/ Հաճախորդը ներառված է միջազգային հեղինակավոր ֆինանսական կամ տնտեսական հրապարակումներում (օրինակ՝ Forbes, Bloomberg, Financial Times), որտեղ նրա կարողությունը գնահատվել է առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար: դ/ Հաճախորդին սպասարկման ընդունելու փուլում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հաճախորդի տարեկան եկամուտները գերազանցում են 1,000,000 ԱՄՆ դոլարը:
29.	Թրաքեր և համանման այլ իրավաբանական կազմավորումներ, ինչպես նաև բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք (բացառությամբ արգելված երկրներում գրանցված, գործունեություն ծավալող իրավաբանական անձանց և կազմավորումների):	Բարձր ռիսկ	
30.	Իրավաբանական անձինք, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է (ներառյալ՝ մահացած (մահացած ճանաչված) անձի գույքի կառավարում):	Բարձր ռիսկ	
31.	Հաճախորդներ, որոնք հանդիսանում են կյանքի ապահովագրության վկայագրերի շահառու:	Բարձր ռիսկ	
32.	Իրավաբանական անձինք, որոնք գործում են արդյունահանող արդյունաբերության ոլորտում:	Բարձր ռիսկ	
33.	Իրավաբանական անձինք, որոնք գործում են ատոմային էներգետիկայի ոլորտում:	Բարձր ռիսկ	Բացառություն կարող են կազմել ՀՀ գերատեսչությունների կողմից վերահսկվող ընկերությունները:
34.	Սեփականատերերի անհարկի բարդ կառուցվածք ունեցող կազմակերպություններ (չորս շերտ՝ չհաշված հաճախորդին և իրական շահառուին):	Բարձր ռիսկ	
35.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր ներգրավված են եղել դիտավորությամբ կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններում (ներառյալ՝ երբ ներգրավված են որպես հանցակից): Սույն չափանիշը տարածվում է	Բարձր ռիսկ	Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հանցագործությունը ըստ ՆԴՄ ողջամիտ կարծիքի չունի հանրային մեծ վտանգավորություն (օրինակ՝ ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների

	նաև այն դեպքերի վրա, երբ նշված անձինք ներգրավված են քրեական վարույթում որպես մեղադրյալ:		խախտման հիման վրա հարցուված քրեական վարույթները և կայասված դատական ակտերը):
36.	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնց կողմից Հայաստանի Հանրապետությունում հաշվի բացումը տնտեսապես արդարացված չէ:	Բարձր ռիսկ	
37.	Ռեզիդենտ իրավաբանական անձ, որի 20% և ավել մասնակիցը և/կամ իրական շահառուն բնութագրվում են բարձր ռիսկի չափանիշով:	Բարձր ռիսկ	
38.	Հասարակական/բարեգործական կազմակերպություն (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ) ¹⁵ :	Բարձր ռիսկ	
39.	Կրոնական խմբավորումներ կամ քարոզչություն իրականացնող ընկերություն:	Բարձր ռիսկ	
40.	Քաղաքական գործունեություն իրականացնող և ՀՀ ԱԺ-ում ներկայացված ընկերություն (օրինակ՝ կուսակցություն):	Բարձր ռիսկ	
41.	Հատուկ նշանակության կազմակերպություններ (օրինակ՝ SPV(special purpose vehicle), СФО (Специализированное финансовое общество)	Բարձր ռիսկ	
42.	Հեջ ֆոնդեր և քրաուդֆանդինգ	Բարձր ռիսկ	
43.	Հաշվապահական և/կամ իրավաբանական խորհրդատվական ծառայություն տրամադրող ընկերություն	Բարձր ռիսկ	
44.	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք չունեն որևէ բանկային հաշիվ	Բարձր ռիսկ	
45.	Անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները	Բարձր ռիսկ	

¹⁵ Ներառյալ՝ Հասարակական կամ բարեգործական ընկերության հավատարմագրային կառավարումը:

46.	Անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են	Բարձր ռիսկ	
47.	Կրիպտոարժույթի առքուվաճառք, փոխարկում կամ այլ գործառնություններ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ (ձեռնարկություն)	Բարձր ռիսկ/Սահմանափակ/ Արգելված	Արգելված, եթե կրիպտոարժույթով գործառնություններն իրականացվում են չլիցենզավորված (այդ թվում նաև այն դեպքում, երբ նշված գործունեությունը չի հանդիսանում լիցենզավորման ենթակա գործունեություն գրանցման և/կամ գործունեության իրականացման երկրում) սուբյեկտի կողմից, որը դրանք իրականացնում է այլ՝ երրորդ անձի անունից և/կամ հաշվին: Սահմանափակ՝ Իր անունից և իր հաշվին կրիպտոակտիվներով գործարքներ իրականացնող անձինք, որոնք գրանցված են և/կամ գործունեություն են ծավալում երկրներում, որտեղ կրիպտոակտիվների ոլորտը կարգավորված չէ: Բարձր ռիսկ՝ ՀՀ տարածքում Լիազոր մարմնի կողմից լիցենզավորված և վերահսկվող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք:
48.	Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններ:	Բարձր ռիսկ /սահմանափակ/արգելված	Նշված ոլորտի թափանցիկության վերաբերյալ առկա է երկրների միություն՝ Extractive Industries Transparency Initiative (EITI), որին անդամակցող երկրների ռեզիդենտ կազմակերպությունները կարող են դասվել որպես բարձր ռիսկ, մյուսները՝ սահմանափակ կամ արգելված՝ կախված այլ ռիսկային գործոնների առկայությունից:
49.	Հաճախորդներ, որոնց սպասարկումը Ընկերության ՆԴՄ հիմնավոր կարծիքով և/կամ Լիազոր մարմնի կողմից ստացված ազդականների հիման վրա պարունակում է համբավի կամ այլ էական ռիսկեր, անկախ սույն փաստաթղթում նշված ռիսկ ախորժակից:	Բարձր ռիսկ/Սահմանափակ/Արգելված	
<u>Գործարքի և/կամ գործարար հարաբերության ռիսկ</u>			
50.	Գործարքներ, որոնք նպատակ ունեն շրջանցել միջազգային պատժամիջոցները:	Արգելված	Արգելված են այն դեպքերը, երբ գործարքը ուղղակիորեն խախտում է միջազգային պատժամիջոցների

			պահանջները, հիմք ընդունելով գործարքի կողմերի, երկրի, գործարքի առարկայի, միջոցների ծագման աղբյուրի, տեղափոխման ուղղու (եթե վերաբերական է) և այլ վերաբերելի հանգամանքներ, որոնք բացահայտում են գործարքի սանցկոն բնույթը: Այսինքն, եթե առկա է միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկ:
51.	Մեկ տարի և ավել գործարք չիրականացրած Հաճախորդի կողմից կատարվող գործարքներ, որոնք գերազանցում են Հաճախորդի կողմից նախապես հայտարարած նախատեսվող գործարքների քանակը և շրջանառությունը 2 և ավելի անգամ:	Բարձր ռիսկ	
52.	Հայելային առևտուրը (mirror trading), որը ներառում է երկու հակադիր գործարքներ, երբ պարտատոմսերը կամ բաժնետոմսերը գնվում են մեկ արժույթով և վաճառվում մեկ այլ արժույթով:	Բարձր ռիսկ	
53.	Բարդ ածանցյալ գործիքների առքուվաճառք	Բարձր ռիսկ	Բարդ են հանդիսանում ածանցյալ այն գործարքները, որոնք ենթադրում են ակտիվի (базовых актив) ձեռքբերում և բնութագրվում են թափանցիկության ցածր աստիճանով, այդ թվում՝ ածանցյալ գործարքներ, որոնց արժեքը որոշվում է բարդ մաթեմատիկական մոդելներով, որպես հիմքային ակտիվ (базовых актив) օգտագործվում են ոչ ստանդարտ արժեթղթեր, որոնց արժեքը դժվար է գնահատել:
54.	Ներդրումների իրականացում՝ չլիցենզավորվող բրոքերների կամ միջնորդների միջոցով	Բարձր ռիսկ	
55.	Բրոքերային հաշվի համալրում, որին հաջորդում է գումարի ելքագրումն առանց բրոքերային/դիլարային գործառնությունների իրականացման	Բարձր ռիսկ	
56.	Որպես միջոցների ծագման միակ աղբյուր ներկայացվում է փոխառության կամ պարտքի զիջման պայմանագիր:	Բարձր ռիսկ	
57.	Բարձր ռիսկային երկրից հաճախորդի ներգրավվածությամբ գործարք	Բարձր ռիսկ	

58.	Արժեթղթի փոխանցման և/կամ ստացման երկիրը բարձր ռիսկային երկիր է:	Բարձր ռիսկ	
59.	Հաճախորդի գործունեության բնույթը ակնհայտորեն չի համապատասխանում այն ծառայություններին, որոնց համար նա դիմում է կազմակերպությանը:	Բարձր ռիսկ	
60.	Արժեթղթեր, որոնք չունեն բորսայական շրջանառություն, և դրանց հետագա դուրսգրումը նախատեսվում է իրականացնել արտաբորսայական պայմանագրերի հիման վրա:	Բարձր ռիսկ	
61.	Արժեթղթերի առքուվաճառք, որի նպատակն ու տրամաբանությունը նմանվում են գումարի փոխանցման:	Բարձր ռիսկ	
62.	Գործարքներ, որոնք կապված են ցածր գնով արժեթղթերի՝ penny/microcap արժեթղթերի հետ:	Բարձր ռիսկ	
63.	Անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:	Բարձր ռիսկ	
64.	Բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները	Բարձր ռիսկ	
<u>Պրոդուկտի/ծառայության մատուցման ռիսկ</u>			
65.	Առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը:	Բարձր ռիսկ	Բացառությամբ այն դեպքերի, երբ Ընթացակարգին համապատասխան պատշաճ իրականացվել է Հաճախորդի նույնականացումը, տվյալ դեպքում ռիսկը գտահանտվում է միջին ¹⁶ :
66.	Գործարքների իրականացման հարթակ/տերմինալ՝ առանց հաճախորդի պատշաճ նույնականացման կամ գործարքի կողմերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման:	Բարձր ռիսկ	
<u>Երկրի (աշխարհագրական տարածքի ռիսկ)</u>			

¹⁶ Տե՛ս «Առանց առերես շփման եղանակաով գործարար հարաբերությունների հաստատումը միջին ռիսկային գնահատելու վերաբերյալ» վերլուծությունը:

67.	ՖԱԹՖ «Սև ցանկ»:	Արգելված	Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն, Մյանմա:
68.	ՖԱԹՖ «Մոխրագույն ցանկ»:	Բարձր ռիսկ	Ալժիր, Անգոլա, Բոլիվիա, Բուլղարիա, Կամերուն, Կոտ դ'Իվուար, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Հայիթի, Քենիա, Լաոսի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Լիբանան, Մոնակո, Նամիբիա, Նեպալ, Հարավային Սուդան, Սիրիա, Վենեսուելա, Վիետնամ, Վիրջինյան կղզիներ (Մեծ Բրիտանիա), Եմեն:
69.	Համապարփակ պատժամիջոցների ենթարկված երկրներ:	Արգելված	Համապարփակ պատժամիջոցների ենթարկված են դիտարկվում ԱՄՆ ԱՎՎԳ կողմից ցուցակված հետևյալ երկրները՝ Հյուսիսային Կորեան, Կուբան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Ղրիմը և Ուկրաինայի Դոնեցկի Ժողովրդական Հանրապետությունը և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունը:
70.	Կոռուպցիայի գնահատական (համաձայն՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ի կողմից հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» հաշվետվության):	Բարձր ռիսկ	Երկիր, որը համապատասխան սանդղակով գնահատվել է 20 և ցածր, կամ չի գնահատվել ¹⁷ :
71.	Օֆշորային երկիր	Բարձր ռիսկ	Օֆշորային գնահատման համար հիմք են հանդիսանում հետևյալ ցանկերը՝ Երկրներ, որոնք ցուցակված են ՀՀ կառավարության 1 հունիսի 2017 թվականի N

¹⁷ Դրանք են՝ Ալանդյան Կղզիներ, Ամերիկյան Սամոա, Անդորրա, Անգիլիա, Անտարկտիդա, Անտիգուա, Աուբա, Բերմուդներ, Բուվե Կղզիներ, Բրիտանական Տարածք Հնդկ. Օվկ, Բուրունդի, Կամբոջա, Կայմանյան Կղզիներ, Ծննդյան Կղզիներ, Կոկոսյան (Կիրիբա) Կղզիներ, Կոմորյան Կղզիներ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Կուկի Կղզիներ, Հասարակածային Գվինեա, Էրիթրեա, Ֆոլքլենդյան (Մալվինյան) Կղ., Ֆարերյան Կղզիներ, Ֆրանսիական Հարավային Տարածք, Ֆրանսիական Գվինեա, Ֆրանսիական Պոլինեզիա, Ջիբրալթար, Գրենլանդիա, Գվադելուպա, Գուամ, Գվինեա, Բիսաու, Հաիթի, Մաքդոնալդի Կղզիներ, Կիրիբատի, Կորեայի ԺԺ, Լիվիա, Լիխտենշտեյն, Մակաո, Մարշալյան Կղզիներ, Մարտինիկա, Մայոտ, Միկրոնեզիա, Մոնակո, Մոնտսերրատ, Մյանմա, ԼՂՀ, Նաուրու, Նիդերլանդական Անթիլյան Կղզ., Նոր Կալեդոնիա, Նիկարագուա, Նիուե, Նորֆոլքի Կղզի, Մարիանյան Կղզիներ, Պալաու, Պաղեստին, Պիտքերն, Պուերտո-Րիկո, Ռեյունյոն, Սուրբ Ելենա, Սենթ-Քիտս Եվ Նեվիս, Սեն-Պիեռ Եվ Միքելոն, Սամոա, Սան-Մարինո, Սոմալի, Հարավային Սանդվիչյան Կղզի, Հարավային Սուդան, Սուդան, Սվալբարդ Եվ Ժան Մայեն, Սվազիլենդ, Սիրիա, Թոքելաու, Թոնգա, Թուրքմենստան, Թերքս և Կայկոս Կղզիներ, Թուվալու, Ամերիկյան Արտաքին Փոքր Կղզիներ, Վատիկան, Վենեսուելա, Վիրջինյան Կղզիներ, Ամն, Վիրջինյան, Կղզիներ, Անգիլա, Վոլլիս Եվ Ֆուտունա, Արեվմտյան Սահարա, Եմեն, Հարավսլավիա, Զաիր, Աֆղանիստան, Կուրակաո, Գերնսի, Մեն Կղզի, Ջերսի, Սուրբ Մարտին, Սենտ Մարտեն, Սուրբ Բարթելեմի, Բոնայր, Դելավեր, Թանժեր (Մարոկկոյի Թագավորություն), Լաբուանի Դաշնային Տարածք (Մալայզիա), Մադեյրա (Պորտուգալիայի Հանրապետության Ինքնավար Մարզ), "Նորմանդյան Կղզիներ (Ջերսի, Հերնսի, Սարկ, Օլդերնի Կղզիներ): Տե՛ս ՓԼ/ԱՖ/ՀՈՀ ՏՖ դեմ պայքարի ընթացակարգին կից հավելված թիվ 7-ը:

			595-Ն որոշմամբ, հղում՝ https://www.arlis.am/hy/acts/125156: Սույն ցանկից Ընկերությունը բացառություն է դիտարկում այն երկրներին, որոնք ՖԱԹՖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի փոխադարձ գնահատման արդյունքում IO2-IO5 անմիջական արդյունքներում չունեն ցածր արդյունավետության գնահատական (LE), ինչպես նաև գնահատվել են համապատասխան (C) կամ մեծամասամբ համապատասխան (LC) հետևյալ հանձնարարականներով՝ R9, R10, R22, R24 և R25¹⁸: • Երկրներ, որոնք ցուցակված են ԵՄ հարկային նպատակներով ոչ համագործակցող պետությունների ցանկում, հղում՝ EU list of non-cooperative jurisdictions for tax purposes - Consilium: Սույն ցանկից Ընկերությունը բացառություն է դիտարկում ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրներին:
--	--	--	---

Աղյուսակ 2

Ռիսկ ախորժակի քանակական չափանիշներ, գործարքների կադարման հատուկ կանոններ

Ընկերությունը սահմանում է ռիսկերի ընդունելի քանակական և/կամ ծավալային չափանիշներ և բարձր ռիսկային հաճախորդների տեսակարար կշիռներ՝ ելնելով ռիսկերի հակազդման արդյունավետ մեխանիզմների առկայությունից և արդյունավետությունից, ՆԴՄ ռեսուրսների՝ այդ ծավալներին համահունչ և բավարար լինելու հանգամանքից և հարակից այլ գործոններից:

	Նկարագրություն	Ռիսկ ախորժակ	Առավելագույն հանդուրժողականության շեմ
--	----------------	--------------	---------------------------------------

¹⁸ Այդ երկրներ են՝ Ալբանիան, Անդորան, Ավստրիան, Բելգիան, Բելիզը, Կուկի կղզիները, Կուբան, Կիպրոսի Հանրապետությունը, Չեխիայի Հանրապետությունը, Զիբլարթարը, Հունաստանը, Գերնսին, Իռլանդիայի Հանրապետությունը, Ճապոնիան, Լիխտենշտեյնը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Օմանը, Քաթարը, ԱՄԷ-ն, Սերբիան, Սլովենիան, Տաջիկստանը, Թուրքիան, Ուրուգվայը:



1.	Ոչ ռեզիդենտ հաճախորդների տեսակարար կշիռը ընդհանուր բազայում	70%	5%
2.	Բարձր ռիսկային հաճախորդների քանակն ընդհանուր բազայում	20%	5%
	Այդ թվում՝ բարձր ռիսկի մեջ		
3.	Բարձր ռիսկային ֆիզիկական անձանց տեսակարար կշիռ	55%	3%
	ՔԱՈՒԱ-ների/մեծ ունեցվածքի տեր հաճախորդների տեսակարար կշիռը բարձր ռիսկային ֆիզիկական անձանց շարքում	70%	3%
4.	Բարձր ռիսկային իրավաբանական անձանց տեսակարար կշիռնը	45%	3%
	Բարձր ռիսկային ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը բարձր ռիսկային իրավաբանական անձանց մեջ	35%	1%
5.	Ընկերություններ, որոնց բաժնետիրական կառուցվածքում ներառված մասնակիցը/ները գտնվում են ԱԱՎԳ-ի, ԵՄ և ՄԹ պատժամիջոցների ցանկերում և որոնց բաժնեմասի հանրագումարը չի գերազանցում 50%-ը:	1%	1%